Հայրենիք (2014)
118ր
Տարիքային սահմանափակում՝ 16տ.

Ռեժիսոր՝ Նաո Կուբոտա
Սցենարի հեղինակ՝ Կենջի Աոկի
Դերերում՝ Կենիչի Մացույամա,Սեիյո Ուչինո, Յուկո Տանակա,Սակուրա Անդո

(c) 2014 Homeland Film Partners

Ջիրոն անսպասելի տուն է գալիս Ֆուկոըշիմա առանց որևէ մեկին տեղյակ պահելու: Ոչ ոք այլևս չի ապրում նրա հայրենիքում,քանի որ 2011թ. մարտի 11-ի միջուկայինաղետից հետո այնդարձել է տարհանման գոտի: Դա հենց այն հայրենիքն է, որը նալքել էր 20տարի առաջ:

Նա ուներ աշխատասեր մայր, խիստ հայր, որը հայտնի մարդ էր քաղաքում,և ավագ խորթ եղբայր: Նա երբեք հարմարավետ չէր զգում՝ ապրելով փոքր քաղաքի «բարդ»ընտանիքում: Տունը ինչ-որ անարդարության պատճառով լքելուց ի վեր Ջիրոն երբեք չէր վերադարձել,նույնիսկ իր հորհուղարկավորության ժամանակ: Բայց նա ետ է գալիս: Նասկսում է զբաղվել բրնձի աճեցմամբ և միայնակ ու խաղաղ ապրում իր լքված հայրենիքում: Երբ հայտնվում է Ջիրոյի հին ընկերը, Ջիրոն նրան ասում է. «Ես վերադարձա, քանի որ այստեղ այլևս ոչ ոք չկա»:

Սոիչին՝ Ջիրոյի ավագ խորթ եղբայրը,իր կնոջ, փոքրիկ դստեր և խորթ մորհետ մի կերպ տեղավորվել է ժամանակավոր կացարանում: Նա տառապում է՝ չիմանալով ինչ անել իր հարազատ բնակավայրը կորցնելուց հետո: Լինելով

Ֆերմերի ընտանիքի ավագ որդին՝ իր նախնիների հողը պաշտպանելը միշտ բեռ է եղել նրա համար:

Իր ընտանեկան տնից հեռու լինելով՝ Տոմիկոն՝ Սոիչի խորթ մայրը, աստիճանաբար ծերանում է և կորցնում իր հիշողությունը: Նա դեռ լուռ մտահոգվում է իր հարազատ զավակի՝ Ջիրոյի համար: Սոիչին ասում են, որ Ջիրոն վերադարձել է: Նագնում է Ջիրոյին տեսնելու, և ընտանիքը, ի վերջո, վերամիավորվում է: Վերամիավորումից հետո եղբայրները կարևոր որոշումներ են կայացնում: Ջիրոն իր մորը տանում է իրենց դատարկված բնակավայրը: Սոիչին իր ընտանիքի հետ մեկնում է նոր բնակավայր՝ նոր կյանք սկսելու: